Հայտարարվում է մրցույթ՝ Երևանի «Ս. Խանզադյանի անվան հ. 184 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ դպրոց)

«Մաթեմատիկա» (22 դասաժամ), «Նախնական զինվորական պատրաստություն» (ՆԶՊ) (15 դասաժամ) և «Ֆիզկուլտուրա» (8 դասաժամ) առարկաների ուսուցիչների թափուր տեղի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:

Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:

Հարցազրույցի փուլի համար նախատեսված հարցաշարը կազմում է դպրոցը:

Հանձնաժողովը յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1) դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3Х4 չափսի,

2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

3) անձը հաստատող փաստաթուղթ,

4) «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,

5) ինքնակենսագրություն (Ձև 5),

6) այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

7) ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

9) որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում մասնակցին: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ՝ մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերը ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից՝ **2023 թվականի սեպտեմբերի 06-ից** մինչև **սեպտեմբերի 19-ը ներառյալ**, ամեն օր, ժամը 10:00-ից մինչև 15:00-ն, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023 թվականի սեպտեմբերի 25-ին՝ ժամը 14:00-ին,** Երևանի Ս. Խանզադյանի անվան հ. 184 ավագ դպրոցում, հասցեն՝ ք. Երևան, Գուսան Շերամի 103/3:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 72-73-30 հեռախոսահամարով: